

Հարց.

Ինչպե՞ս կարելի է ստանալ ռադիոհաճախականությունների օգտագործման թույլտվություն ռադիոկապի շարժական ցանցի համար (օրինակ՝ տաքսի ծառայությունների համար) Պատասխան.

Ռադիոկապի շարժական ցանցի համար ռադիոհաճախականությունների օգտագործման թույլտվություն ստանալու համար Ձեզ անհրաժեշտ է.

1. Հանձնաժողով ներկայացնել հայտ ռադիոկապի ցանցի (շարժական) ռադիոհաճախականությունների օգտագործման թույլտվություն ստանալու համար, որը պետք է պարունակի ներքոնշյալ ցանկում թվարկված փաստաթղթերը՝ 2 օրինակից.

Ց Ա Ն Կ

ՈԱԴԻՌԱԾԱԽԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՍՊՐՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ

Ներկայացվող փաստաթղթի անվանումը	
1.	Իրավաբանական անձանց համար՝ կանոնադրության և պետոռեգիստրի գրանցման վկայականի պատճենները. Ֆիզիկական անձանց համար՝ անձնագրի և սոցիալական քարտի պատճենները
2.	ԼՂՀ հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2007թ. նոյեմբերի 27-ի թիվ 19Ն որոշմամբ հաստատված թիվ 5 հավելվածում նշված տեղեկությունները (հավելվածը կցվում է)
3.	Թույլտվություն ստանալու նպատակով դիմելու համար Հանձնաժողովի կողմից սահմանված թույլտվության տրամադրման վճարի 1%-ի վճարումը հավաստող անդորրագիրը: Կախված բազային կայանների հաղորդիչների հզորությունից պետք է մուծել ներքոնշյալ վճարներից մեկի 1%-ը կազմող գումարը. Վերգետնյա շարժական ռադիոկապի կայաններ 30 ՄՅց-ից բարձր ռադիոհաճախականությունների տիրույթում՝ ըստ բազային կայանների հաղորդիչների հզորության մինչև 5 Վտ ներառյալ՝ 250 000 դրամ 5 Վտ-ից բարձր, մինչև 20 Վտ ներառյալ՝ 266 000դրամ 20 Վտ-ից բարձր, մինչև 50 Վտ ներառյալ՝ 283 000դրամ 50 Վտ - ից բարձր՝ 333 000դրամ

Հայտատուի ներկայացրած Հայտը մուտքագրվում է Հանձնաժողովում: Հանձնաժողովի համապատասխան ստորաբաժանումը ստուգում է Հայտի ամբողջականությունը, նրանում ընդգրկված փաստաթղթերի ձեւակերպման ճշտությունն ու համապատասխանությունը թիվ 19Ն կարգի պահանջներին:

Հայտը չի ընդունվում ուսումնասիրության, եթե՝

ա) նրանում ընդգրկված փաստաթղթերը չեն համապատասխանում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքներով, այլ իրավական ակտերով եւ սույն կարգով սահմանված պահանջներին.

բ) ներկայացված փաստաթղթերում եւ տեղեկություններում առկա են անճշտություններ եւ անհամապատասխանություններ.

գ) Հայտատուն՝ օրենքի, իսկ իրավաբանական անձ հանդիսացող Հայտատուն նաեւ իր կանոնադրության համաձայն իրավունք չունի օգտագործել հայցվող ռադիոհաճախականությունը:

Հանձնաժողովը Հայտի ստուգման արդյունքների մասին գրավոր տեղեկացնում է Հայտատուին՝ Հայտն ստանալու օրվանից ոչ ուշ, քան 10 աշխատանքային օրվա ընթացքում: Հայտի ստուգման բացասական արդյունքի դեպքում Հայտը պահպանվում է Հանձնաժողովում:

Հայտի ստուգման դրական արդյունքի դեպքում Հանձնաժողովն սկսում է Հայտի քննարկման գործընթացը եւ կայացնում համապատասխան որոշում՝ Հայտատուին Հայտի ստուգման արդյունքների մասին գրավոր տեղեկացնելու օրվանից հետո՝ 30 աշխատանքային օրվա ընթացքում:

Անձին Թույլտվություն տրամադրելու մասին Հանձնաժողովի որոշումն ուժի մեջ մտնելու պահից 6 աշխատանքային օրվա ընթացքում Թույլտվություն ստացած Անձի կողմից Թույլտվության տրամադրման վճարի մնացած գումարի վճարումը հավաստող անդորրագիրը Հանձնաժողով չներկայացնելու դեպքում Թույլտվություն տրամադրելու մասին Հանձնաժողովի որոշումն ուժը կորցրած է համարվում:

Թույլտվությունը կարող է տրամադրվել մինչև 10 տարի ժամկետով:

Թույլտվություն տրամադրելու վերաբերյալ դրական որոշում ընդունելուց հետո՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում, Հանձնաժողովը որոշման պատճենն ուղարկում, իսկ Թույլտվությունը հանձնում է Թույլտվություն ստացած անձին: Մինչեւ վերջինիս ներկայանալը Թույլտվությունը պահվում է Հանձնաժողովի համապատասխան ստորաբաժանումում:

Թույլտվություն ստացած անձի ստորագրությամբ Թույլտվության ստացման կտրոնը (հավելված N 10) պահվում է Հանձնաժողովում:

Թույլտվության պայմանները խախտելու դեպքում անձը ենթարկվում է պատասխանատվության՝ օրենքով եւ Հանձնաժողովի կողմից սահմանված կարգի համաձայն:

Տ Ե Ղ Ե Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ն Ե Ր

ռադիոկապի ցանցի (շարժական) ռադիոհաճախականությունների օգտագործման
թույլտվություն ստանալու համար

Ընդհանուր տեղեկություններ

1. Հայտատու (ֆիզիկական անձի անունը, ազգանունը, իրավաբանական անձի անվանումը, բանկի հաշվի
համարը, բանկի անվանումը և հարկային կոդը) _____

2. Գտնվելու վայրը _____

3. Հեռախոս, ֆաքս _____

4. Ռադիոկապի օգտագործման նպատակը _____

5. Էլեկտրոնային հաղորդակցության բնագավառում գործունեության լիցենզիայի համարը և գործո
ղության ժամկետը (առկայության դեպքում) _____

(լրացվում է՝ էլեկտրոնային հաղորդակցության բնագավառում լիցենզավորված գործունեության դեպքում)

Ընդհանուր տեղեկություններ ռադիոկապի ցանցի վերաբերյալ

6. Օգտագործվող սարքավորման տեխնիկական
ստանդարտի անվանումը _____

(լրացվում է դրա առկայության դեպքում)

7. Ռադիոկապի ցանցի կազմակերպման
տարածքը _____

(շրջան, քաղաք, բնակավայր)

8. Բազային կայանների քանակը _____

9. Պլանավորվող բաժանորդային ցանցի ծավալը _____

(բաժանորդների քանակը)

Տեխնիկական տվյալներ

10. Ռադիոհաճախականությունների շերտերը (ՄՀց) _____

(ընդունման / հաղորդման)

11. Դուալֆրեկվենսային բաժանվածություն (ՄՀց) _____

12. Ցանցի համար պահանջվող ռադիոհաճախականությունների քանակը _____

13. Բազային կայանների տեղադրման վայրերը, աշխարհագրական կոորդինատները.

Բազային կայանի հերթական	Բազային կայանի տեղադրման վայրը (հասցեն)	Արևելյան երկայնություն		Հյուսիսային լայնություն	
		աստիճան	րոպե	աստիճան	րոպե

համարը					

14. Բազային կայանների անտենաների բարձրությունը, ազիմուտը և տեղի անկյունը.

Բազային կայանի հերթական համարը	Բարձրությունը երկրի մակերևույթից (մ)	Բարձրությունը ծովի մակերևույթից (մ)	ճառագայթման ազիմուտը (աստիճան)	Տեղի անկյունը (° աստիճան)

15. Ցանցում օգտագործվող վերահաղորդիչների քանակը _____

Հայտատու՝ _____
(ստորագրություն, անուն, ազգանուն, պաշտոն)

« _____ » _____ 200 թ.

Կ. Տ

Լրացուցիչ տեխնիկական տվյալներ
(յուրաքանչյուր բազային կայանի համար)

- Բաժանորդների քանակը կայանի սպասարկման գոտում _____
- Ռադիոհաճախականությունների շերտերը (ՄՅց) հաղորդման / ընդունման _____
- Հաղորդչի կրող ռադիոհաճախականության հզորությունը (Վտ) _____
- ճառագայթման դասերը _____
- Ընդունիչի զգայունությունը _____
- Անտենայի տեսակը հաղորդիչ / ընդունիչ _____
- Անտենայի ուժեղացման գործակիցը (դԲ) հաղորդիչ / ընդունիչ _____
- Անտենայի դիագրամի ուղղվածության լայնությունը (աստիճան) հաղորդող/ ընդունող _____
- Մեկ կրող ռադիոհաճախականության վրա ինֆորմացիոն (ստանդարտ հեռախոսային) կապուղիների քանակը _____

Հայտատու՝ _____
(ստորագրություն, անուն, ազգանուն, պաշտոն)

« _____ » _____ 200 թ.

Կ. Տ

